ՇԱՔՐՈ ՄԽՈՅԱՆ



2007 թ. փետրվարի 1-ին Մոսկվայում վախճանվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ականավոր արևելագետ-քրդագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Շաքրո Խուդոյի Մհոյանը: Հայաստանի արևելագիտությունը զրկվեց տաղանդաշատ հետազոտողից:

Շ. Մհոյանը ծնվել է 1930 թ. ապրիլի 12-ի, Արագածի շրջանի Ալագյազ գյուղում:

1948 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետ: Մասնագիտական կրթություն ստանալուց հետո՝ 1952–1954 թթ., Ալագյազի միջնակարգ դպրոցում դասավանդել է պատմություն: 1956–1960 թթ., «Ռյա Թազա» թերթի խմբագրի տեղակալն էր:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտում Շ. Մհոյանը աշխատել է 1960 թվականից՝ զբաղեցնելով քրդագիտության բաժնի վարիչի պաշտոնը: «Քրդական ազգային-ազատագրական շարժումները Իրաքում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» թեմայով թեկնածուական ատենախոսությունը երիտասարդ արևելագետի լուրջ հայտն էր գիտության ասպարեզում (1963): Դրան հետևեց 1978 թ. Մոսկվայում պաշտպանած դոկտորական ատենախոսությունը՝ «Քուրդ ժողովրդի ազգային ինքնավարության հիմնահարցերը Իրաքում» թեմայով:

Իր գիտական լուրջ վաստակի և քրդագիտության մեջ նոր ուղղություններ բանալու շնորհիվ 1990 թ. Մհոյանն ընտրվեց Հայաստանի ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ իսկական անդամ: 1994 թ. ակադեմիկոս Շ. Մհոյանը հրավիրվել է Մոսկվա և ստանձնել քրդագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնը՝ պահպանելով իր կապերը Հայաստանի ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հետ և շարունակելով նրա հետ իր արգասաբեր համագործակցությունը:

Ակադեմիկոս Շ. Մհոյանը համբավավոր քրդագետ էր և պատկառելի ավանդ է ներդրել Հայաստանում քրդագիտության զարգացման մեջ: Նրա գիտահետազոտական աշխատանքներն արդյունավորվել են 10 մենագրություն-

ներով և մի քանի տասնյակ գիտական հոդվածներով, հրապարակումներով և այլ աշխատություններով:

Շ. Մհոյանը, գիտահետազոտական աշխատանքներին զուգահեռ, զբաղվել է իր վաղեմի՝ նախասիրած մանկավարժական աշխատանքով ևս՝ դասախոսելով Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում: Գիտնականը նշանակալի ավանդ ունի քուրդ ժողովրդի պատմության հիմնահարցերի մշակման անդաստանում, հաջողությամբ գլուխ է բերել քուրդ ժողովրդի պատմության դասընթացը կազմելու գործը: Շ. Մհոյանը տարիներ ի վեր արևելագիտության ինստիտուտի գիտխորհրդի անդամ էր, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարի՝ քրդագիտությանը նվիրված հատորների հմուտ խմբագիրը:

Արտասահմանյան քրդական գիտամշակութային և հասարակական շրջաններում ակադեմիկոսը համընդհանուր ճանաչման արժանացած գիտա-կան հեղինակություն էր և պատվավոր անդամ էր քրդական մի քանի գիտական կենտրոնների: Շ. Մհոյանը քանիցս տպագրվել է «Լրաբեր հասարա-կական գիտությունների» հանդեսում, արծարծել արևելագիտական, քրդագի-տական և դրանց առնչվող քաղաքագիտական լուրջ հիմնահարցեր:

Իր խորապես մարդկային բնավորությամբ, կենսուրախ խառնվածքով և անմիջականությամբ Շ. Մհոյանը վայելում էր իր աշխատանքային միջավայրի, գործընկերների սերն ու հարգանքը: Կհարատևեն նրա ստեղծած գիտական արժեքները, իսկ մեզ՝ ժամանակակիցներիս համար՝ իր ինքնատիպ նկարագրի հիշողությունը:

«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի
խմբագրություն, խմբագրական խորհուրդ